ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 184

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 19 » « 04 » 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Հ. Խաչատրյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2022 թվականին «Կինոն՝ ուսուցիչ» ծրագրի իրականացման հետ կապված ծախսերի ապահովմանը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պետական մարմինը պարտավոր է՝

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 13-ի N 640-Ա/2 և ապրիլի 19-ի N 682-Ա/2 հրամանների՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Ստեղծագործական կրթամշակութային նախագծեր» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 11-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել **«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,**

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվո նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղ թյան գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նոր մերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 5280.0 հազար (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

9.2. Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 11 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Գ. Սաֆարյան

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
ք. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100
ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76

Նախագահ՝

---------- Հ. Խաչատրյան

Կ. Տ.

Հավելված N 1
19 ---------- 04 ---------- 2022թ.
N ------ 189 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
«ԿԻՆՈՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉ»

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք. Երևան, Վարդանանց 18
3	Ծրագրի անվանում	«ԿԻՆՈՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉ»
3.1	Բովանդակություն	**«ԿԻՆՈՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉ»** ծրագիրը կինոյի միջոցով իրականացվող կրթական, մշակութային ծրագիր է, որը նպաստում է կրթության և մշակույթի փոխադարձ կապի ամրապնդմանը, կրթության շարունակականությանը կրթական տարբեր հարթությունների միջև: Ծրագրի ընթացքում 6-9 դասարանների աշակերտներից բաղկացած 20-25 աշակերտ ընդգրկող առանձին խմբեր 1-1,5 ժամ **«Կինոն՝ գրականության ուսուցիչ», «Կինոն՝ հայոց լեզվի ուսուցիչ» և «Կինոն՝ պատմության ուսուցիչ» ստեղծարար կինոլաբերում** մենթոր-ղեկավարների, կինոռեժիսորների, կինոգետների, կինոքննադատների պարբերական մասնակցությամբ, կինոդասախոսությունների, կինոժառանգության առանձին ֆիլմերի թիրախավորված կինոֆրագմենտների քննական վերլուծությունների, սցենարական տեքստերի համեմատական քննության միջոցով, քննադատական մտածողության հիման վրա ուսումնասիրում են այն ֆիլմերը, որոնք ստեղծված են **6-9-րդ դասարանների «Գրականություն», «Պատմություն», «Հայոց լեզու»** առարկաների առարկայական ծրագրերում ընդգրկված հեղինակների գրական ստեղծագործությունների հիման վրա կամ մոտիվներով և պատմական թեմաներով ու ժամանակաշրջաններով՝ միաժամանակ ուսումնասիրելով տվյալ հեղինակներին ու պատմական թեմաներն իրենց ժամանակաշրջաններով, հայոց լեզուն՝

		գործածության ու կիրառության տարբեր դրսևորումների մեջ: Ծրագրի ընթացքում **յուրաքանչյուր ամիս** կինոլաբերում ընդգրկվող աշակերտների խմբերը փոխվելու են և հաջորդող ամիսներին ընդգրկվելու են նոր խմբեր: Ծրագրի ընդհանուր տևողությունը **4 (չորս) ամիս, որից մեկ ամիսը նախապատրաստական շրջան, երեք ամիսը՝ ընդգրկվածություն բուն կինոլաբերում:** Բուն կինոլաբերում անցկացվող գործընթացին **(մայիս-հունիս-հուլիս)** նախորդում է նյութերի նախնական հետազոտության, օգտագործվող կինոֆրագմենտների և սցենարական նյութերի պատրաստման, ինչպես նաև աշակերտների հայտավորման և ընտրության մեկամսյա շրջան **(ապրիլ ամիս)** կինոլաբերի մենթոր-ղեկավարների, ծրագրում ընդգրկվծ մասնակիցների կողմից: Աշակերտներն ընդգրկվում են նախապես բացված հայտավորման միջոցով: Ընդգրկման չափորոշիչ է համարվում այն, որ դիմողներն ունեն ընդգծված հետաքրքրություն տվյալ **«Հայոց լեզու», «Գրականություն», «Պատմություն»** առարկաների, արվեստի, **մասնավորապես կինոյի նկատմամբ,** պատրաստ են քննադատական մտածողության, քննական վերլուծության հիման վրա ստեղծագործ աշխատանքի, նպատակ ունեն խորությամբ ուսումնասիրել թեմաները և այլն: Կինոլաբերի ավարտին 1 (մեկ) միասնական կլոր սեղանի միջոցով և բոլոր մասնակիցների, ուսուցիչների, ծնողների ներգրավմամբ տեղի կունենա ընդհանուր քննարկում:
3.2	Նպատակ	Ծրագրի նպատակն է 6-9-րդ դասարանների դպրոցականների շրջանում **«Գրականություն», «Պատմություն», «Հայոց լեզու»** առարկաների առարկայական ծրագրերի որոշ մասի առավել խորքային յուրացումը կինոյի և նրան հարակից արվեստների՝

		երաժշտության, կերպարվեստի, սցենարական արվեստի, գրականության և լեզվի քննական արվեստի միջոցով, քննադատական մտածողության, քննական վերլուծության, համեմատական համակարգերի կիրառման միջոցով աշակերտների մոտ հմտությունների և կարողությունների զարգացումը, այս միջոցով կինոժառանգության լավագույն ֆիլմերի հետ ծանոթացումը:
3.3	Անցկացման ժամկետ	01 ապրիլի-31 հուլիս
3.4	Անցկացման վայր	Ք. Երևան, Հայաստանի կինոգործիչների միություն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ակնկալվող արդյունքն է քննադատական մտածողության, քննական վերլուծության զարգացումը, արվեստի առավել խորքային ընկալումը, մեդիագրագիտության զարգացումը, ժամանակի և իրողությունների համադրումը փոխկապվածության մեջ, որակյալ բովանդակության և անորակ բովանդակության ճանաչողությունը, գրական հեղինակների և պատմական դեպքերի ու ժամանակաշրջանների մեդիագրագետ իմացությունը, համացանցային և այլ ռեսուրսային միջոցների իրենց հասանելի ոչ որակյալ բովանդակության գոնե մասնակի փոխարինումը որակյալ բովանդակությամբ:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	6-9-րդ դասարանների շուրջ 230 աշակերտների ընդգրկվածություն: 3 մենթոր-ղեկավարների (սցենարիստ, ռեժիսոր) երեքամսյա ընդգրկվածություն: 15-20 կինոքննադատների, կինոռեժիսորների, այլ կինոմասնագետների պարբերական ընդգրկվածություն: Շուրջ 20 հայ և համաշխարհային կինոժառանգության ֆիլմերի ուսումնասիրություն: Հայոց լեզվի, գրականության, պատմության նոր ձևաչափի ուսումնասիրություն: Ուսուցիչների, ծնողների ներգրավվածություն:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Գ. Սաֆարյան

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
Քաղ. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100
ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76
Նախագահ՝

---------- Հ. Խաչատրյան

Կ. Տ.

Հավելված N
« 19 » « 04 » 2022 թ
N 184 պայմանագր

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Կինոն՝ ուսուցիչ» ծրագրի իրականացման ծախսերի
(2022 թվականին)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը	Գումարը (հազար դրամ
1	**Ստեղծագործական անձնակազմի վարձատրություն** (ներառյալ հարկերը)				**3760.0**
	ծրագրի ղեկավար	ամիս	4	200.0	800.0
	կինոլաբերի համակարգող	ամիս	3	140.0	420.0
	ֆինանսական համակարգող	ամիս	4	170.0	680.0
	«Կինոն՝ գրականության ուսուցիչ» կինոլաբի մենթոր-ղեկավար	մարդ	3	160.0	480.0
	«Կինոն՝ հայոց լեզվի ուսուցիչ» կինոլաբի մենթոր-ղեկավար	մարդ	3	160.0	480.0
	«Կինոն՝ պատմության ուսուցիչ» կինոլաբի մենթոր-ղեկավար	մարդ	3	160.0	480.0
	կինոցուցադրումների պատասխանատու	մարդ	3	140.0	420.0
2	**Կազմակերպչական ծախսեր**				**640.0**
	Հայկական համաշխարհային կինոժառանգության ֆիլմերի ընտրում, հետազոտում, ուսումնական վիդեոնյութերի համար ֆրագմենտների հաստատում, տեքստային վերլուծում, թարգմանություն	նյութ	1	200.0	200.0
	Հայկական համաշխարհային կինոժառանգության ֆիլմերի վերամոնտաժում, ուսումնական վիդեոնյութերի մոնտաժում	նյութ	1	250.0	250.0
	Կինոդասախոսությունների տեքստերի պատրաստում, խմբագրում	նյութ	1	190.0	190.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**4400.0**

ԱԱՀ*				880.0
ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				5280.0

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարող կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Սաֆարյան

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի կինոգործիչների
միություն» ՀԿ
ք. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100
ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76
Նախագահ՝

_____ Հ. Խաչատրյան

Կ.Տ.